ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Արգիշտի Վարդանյան

ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Հիմնաբառեր. *Մամիկոնյաններ, Մանվել, Վարազդատ, Արշակունյաց թագավորություն, Մովսես Խորենացի, Փավստոս Բուզանդ, Շապուհ Բ, Սուրեն, պարսիկներ, ճակատամարտ:*

ՄՈՒՏՔ

Մեծ Հայքի թագավոր Պապ Արշակունին (369-374 թթ.), որը կարողացել էր կարճ ժամանակով վերականգնել պետության երբեմնի հզորությունը, զոհ գնաց հռոմեացիների և հայ ռազմաքաղաքական ու եկեղեցական վերնախավի խարդավանքներին[1]: Պապը վերջին Արշակունի գահակալն էր, որի ժամանակ Մեծ Հայքի թագավորությունը վարում էր անկախ արտաքին քաղաքականություն՝ հավասարապես հարաբերություններ պահպանելով թե՛ Արևելահռոմեական կայսրության (395 թ. հետո՝ Բյուզանդիա), թե՛ Պարսկաստանի հետ: Պապին հաջորդած Վարազդատի (374-378 թթ.) կառավարման շրջանում երկիրն ընկղմվեց ներքին երկպառակությունների հորձանուտ: 376 թ. թագավորի կողմից մի շարք մեղադրանքների արժանանալով՝ սպանվեց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը[2], ինչն ավելի խորացրեց ներքաղաքական ճգնաժամը:

Մուշեղի սպանությունից հետո, փորձելով վերջնականապես թուլացնել Մամիկոնյանների դիրքերը հայոց թագավորության պետական կառավարման համակարգում, Վարազդատ արքան սպարապետության պաշտոնը հանձնում է իր դայակ Բատ Սահառունուն, իսկ Մամիկոնյան տոհմի նահապետ և տանուտեր է նշանակվում Վաչե Մամիկոնյանը[3]: Պարսից արքունիքը, օգտվելով Մեծ Հայքում ստեղծված անկայուն վիճակից փորձեց ավելի խորացնել երկրում ստեղծված ներքաղաքական ճգնաժամը, ինչի հետևանքով կյանքի կկոչվեր իրենց հեռահար նպատակները, այն է՝ կտապալվեր Սասանյաններին թշնամի Արշակունիների հարստությունը, որին ձգտել էին 227 թ. Պարսկաստանում իշխանության գալուց ի վեր, և Մեծ Հայքի տրոհումը կդառնար իրողություն: Եվ այդ ճանապարհին, հռոմեացիների օգնությամբ գահ բարձրացած Վարազդատին որպես հակակշիռ Հայաստան ուղարկեցին Մանվել Մամիկոնյանին: Վերջինս իր Կոմս եղբոր հետ «ի գերութենէն եկին ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքային»[4], հավանաբար՝ 368-369 թթ. Հայաստան կատարած պարսից արշավանքների ժամանակ: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մանվելը և իր եղբայրը մասնակցել են քուշանների դեմ պարսից արշավանքին: Շապուհի բանակը, որը գերազանցապես բաղկացած էր գերյալ հայերից և մյուս ժողովուրդներից, սարսափելի պարտություն է կրում[5]: Ըստ պատմիչի՝ ճակատամարտում «բանբեր անգամ ոչ ապրէր. բայց Մանուէլ որդի Ատաշինայ ի Մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարբն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին»[6]: Շարունակելով՝ պատմիչը նշում է, որ Շապուհը, տեսնելով, որ իր ամբողջ բանակից փրկվել են միայն երկու հայեր,

---

** Հոդվածը ներկայացվել է 14.05.2020 թ., գրախոսվել՝ 03.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] Տե՛ս Аммиан Марцеллин, История (այսուհետև՝ Марцеллин), перевод с латинского Ю.Кулаковский, вып. III, Киев, 1908, XXX, 1, 21-22; «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Ե., 1987, էջ 352, 354, 356; Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւն Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, (այսուհետև՝ Մովսես Խորենացի), Ե., 1991, էջ 306-307:

[2] Մուշեղ Մամիկոնյանի գործունեության վերաբերյալ վերջին ուսումնասիրությունը տե՛ս Վարդանյան Ա., Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, № 1, էջ 14-27:

[3] Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 362, 364: IV դ. երկրորդ կեսին գործունեություն ծավալած Վաչե Մամիկոնյանի վերաբերյալ այլ տեղեկություններ չկան: Փավստոս Բուզանդի հաղորդումից գիտենք միայն, որ Վաչեն զոհվել է պարսիկների դեմ Զարեհավան քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (տե՛ս նույն տեղում, էջ 388):

[4] Նույն տեղում, էջ 364:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Նույն տեղում:

նրանց վրա բարկացավ և արտաքսեց իր երկրից[1]: Սակայն Փավստոս Բուզանդի այս վերջին հաղորդումը հավատ չի ընծայում և մեր կարծիքով ճիշտ է նկատել Հ.Մանանդյանը, Մանվելը Հայաստան եկավ Շապուհ Բ-ի համաձայնությամբ և հանձնարարությամբ[2]:

ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Մանվել Մամիկոնյանի գործունեության անդրադառնալը փորձենք պարզել, թե վերջինս տոհմի ավագ, թե կրտսեր ճյուղին էր պատկանում: Մանվել Մամիկոնյանը Փավստոս Բուզանդի կողմից հիշատակվում է որպես «որդի Արտաշինայ ի Մամիկոնեան ի տոհմէն»[3]: Ապա կարճ ժամանակ անց, երբ Մամիկոնյան իշխանը Հայաստանում էր ու հանդիմանում էր Վարազդատին, պատմիչը նշում է՝ «Վասակ հայր Մուշեղի»[4]: Պատմիչի հաղորդումը ցույց է տալիս, որ Մանվելը և Մուշեղը եղբայրներ չէին: Լեոն անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ նրանք բոլոր Մամիկոնյաններից ավելի մոտ էին հարազատությամբ[5]: Ս. Երեմյանը Մանվելին համարում է Մուշեղի եղբայրը[6]: Ներսես կաթողիկոսին նվիրված վարքագրությունում ևս մի քանի անգամ հիշատակվում է, որ Մանվելը Վասակ սպարապետի որդին էր ու Մուշեղի եղբայրը[7]: Սա էլ հետագա ուսումնասիրողներին առիթ է տվել, առանց հաշվի առնելու Փավստոս Բուզանդի տեղեկությունը, որը ժամանակագրորեն ավելի մոտ է կանգնած IV դ. վերջին կատարվող դեպքերին, պնդելու, որ Մանվելը Վասակի որդին էր: Անդրադառնալով Մամիկոնյանների ճյուղագրությանը և հիմնվելով միայն Մեսրոպ Վայոցձորեցու հիշատակության վրա, Վ. Եղիազարյանը ոչ միայն Մանվել և Կոմս Մամիկոնյաններին է ճանաչում որպես Վասակ սպարապետի որդիներ, այլև՝ Համազասպ Մամիկոնյանին[8]: Չենք կարող համաձայնել Ս. Երեմյանի և Լեոյի տեսակետներին, ովքեր, հաշվի չառնելով պատմիչի հաղորդումը, թե Մանվելն Արտաշես Մամիկոնյանի որդին է, նշում են, որ բոլոր Մամիկոնյաններից Մանվելը Մուշեղին ավելի մոտ էր, քանի որ սկզբնաղբյուրներից գիտենք, որ Մուշեղն ուներ հորեղբոր որդիներ՝ կրտսեր Վարդանը, Սամվելը, չափահաս տարիքում էր գտնվում որդին՝ Համազասպը[9] և, ի վերջո, տանուտեր Վաչե Մամիկոնյանը[10]: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մանվելը և Մուշեղը պարզապես տոհմակիցներ էին և Մանվելի հայրը՝ Արտաշես Մամիկոնյանը, Վասակ սպարապետի եղբայրը չէր, վերջիններս երեք եղբայրներ էին (Վարդանը, Վասակը, Վահանը) և նրանց գործունեությունը մանրակրկիտ ներկայացված է սկզբնաղբյուրներում, այլ տոհմակիցներ էին: Հավանաբար Արտաշեսը սպարապետ Վաչե Մամիկոնյանի եղբոր որդին էր, որի հայրը սպարապետի հետ միասին ընկել էր պարսիկների դեմ ճակատամարտում՝ քանի որ, երբ Վաչեի զոհվելուց հետո Խոսրով Կոտակը (330-338 թթ.) նրա որդի Արտավազդին տվեց սպարապետության պաշտոնը, ըստ Փավստոս Բուզանդի, «զի այլ յազգին

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Ե., 1978, էջ 235:

[3] Փավստոս Բուզանդ, էջ 364:

[4] Նույն տեղում, էջ 366:

[5] Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., 1966, էջ 490, ծան. 2:

[6] Տե՛ս Երեմյան Ս., Մեծ Հայքի թագավորության թուլացումը 370-380թթ., «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ԱՍՀ ԳԱ հրատ., հ. II, Ե., 1984, էջ 108:

[7] Տե՛ս Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պաթեւի Հայոց Հայրապետի, «Սոփերք Հայկականք», Զ., Վենետիկ, 1853, էջ 68, 119, 120:

[8] Տե՛ս Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսեսի հայոց հայրապետի պատմությունը, թարգմանություն գրաբար բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Վանո Եղիազարյանի, Վանաձոր, 2015, էջ 174-175, ծան. 297; էջ 176, ծան. 302; էջ 184, ծան. 368: Տե՛ս նաև Եղիազարյան Վ., Մեսրոպ Մաշտոցը՝ Մամիկոնյան տոհմի ազնվական, Էջմիածին, 2017, էջ 57, ծան. 41:

[9] Տե՛ս Մեսրոպ Երեց, Պատմութիւն վարուց եւ մահուան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծին Ներսէսի, Կ. Պոլիս, 1737, էջ 221:

[10] Հ. Դավթյանը տալով նշանավոր Մամիկոնյանների ամփոփ անվանացանկը, նշում է, որ Վաչեն Մուշեղ Մամիկոնյանի որդին է (տե՛ս Դավթյան Հ., Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Ե., 2015, էջ 28): Այս տեսակետը որևէ սկզբնաղբյուրով չի հաստատվում, Մուշեղը և Վաչեն մի միայն տոհմակիցներ էին, գործել են նույն ժամանակահատվածում և Վաչեն եղել է Մամիկոնյան կրտսեր ճյուղի ներկայացուցիչներից մեկը, այլապես Մանվելին չէր հաջողվի այդքան դյուրին Վաչեից խլել Մամիկոնյան տանուտերությունը:

ոչ գտաւ հօժկու, զի ի մեծ պատերազմին մեռան»[1]: Մնում է եզրակացնել, որ Արտավազդ սպարապետը և Արտաշես Մամիկոնյանը հորեղբոր որդիներ էին և վերջինիս հայրը Վաչե սպարապետի եղբայրն էր, ում անունը սկզբնաղբյուրներում չի պահպանվել:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մանվելը, Հասնելով Հայաստան, Տարոնում հանդիպեց Վաչեին, «որ յառաջն էր լեալ նահապետ, մինչ չև եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն զօր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ: Քանզի նա էր երէց յազգին, և Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան պատուին. և Վաչէն լինէր երկրորդ»[2]: Ինչպես վերը տեսանք, Մանվելն ուղղակի Մամիկոնյան տոհմից էր, և ֆեոդալական համակարգի աստիճանակարգով նա չէ, որ պետք է ստանձներ տոհմի ավագությունը՝ Մուշեղի մերձավոր հարազատների փոխարեն, իսկ տարիքը չէր կարող հիմք դառնալ կրտսեր ճյուղի ներկայացուցիչի համար՝ ավագ ճյուղի անդամների առկայության պայմաններում ստանձնելու տոհմի ավագությունը[3]: Քանի որ Մանվել Մամիկոնյանը հատուկ առաջադրանքով էր եկել Հայաստան, ուներ պարսից հզոր արքայի աջակցությունը և հրապարակի վրա եղած մյուս տոհմակիցները, հատկապես տանուտեր Վաչեն, չընդդիմացան Մանվելի նկրտումներին: Փավստոս Բուզանդը, փորձելով արդարացնել Մանվելի արարքը, շեշտում է, որ նա տոհմի մեջ ավագն էր, սակայն վերջինս Մամիկոնյան տոհմի կրտսեր ճյուղից էր: Եվ ինչպես ճիշտ է նկատել Բ. Հարությունյանը, Մանվել Մամիկոնյանը բացահայտ խախտեց ընդունված կարգը՝ Վաչեից խլելով տոհմի տանուտիրությունը[4], քանի որ տոհմերի ավագներին նշանակում էր թագավորը և դրա վկայությունն է Փավստոս Բուզանդի հաղորդումն այն մասին, որ Արշակ Բ-ն (346-368 թթ.) Մամիկոնյան եղբայրներից ավագին նշանակել է տոհմի նահապետ, միջնեկ եղբայր Վասակին՝ սպարապետ, իսկ Վահանին՝ զորապետ[5] հավանաբար արքունի բանակում:

ՄԱՆՎԵԼԻ ԵՎ ՎԱՐԱԶԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամրապնդվելով Տարոնում՝ Մանվել Մամիկոնյանն իր շուրջն է համախմբում պարսիկների հովանավորությունը վայելող ուժերին, Վարազդատի կառավարումից դժգոհ նախարարներին ու սպասում էր հարմար առիթի՝ իրականացնելու իր քաղաքական ծրագրերը: Իսկ առիթը շուտով ներկայանում է: Սկսվում է վեստգոթերի արշավանքն Արևելահռոմեական կայսրության և Հայաստանից հետ են կանչվում կայսերական զորամասերը[6]: Գործելու ազատություն ստացած Մամիկոնյանը, ըստ Փավստոս Բուզանդի, թագավորի մոտ է ուղարկում իր պատգամաբերներին. «ասէր՝ թէ փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ զանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր»[7]: Նա Վարազդատին մեղադրում է նաև Մուշեղ սպարա-

---

[1] *Փավստոս Բուզանդ, էջ 46:*

[2] *Նույն տեղում, էջ 364, 366:*

[3] *Ն. Ադոնցը, քննելով նախարարական համակարգի կառուցվածքը, նշում է, որ թագավորը ճանաչում կամ վավերացնում էր օրինական ժառանգների իրավունքները և սեփականության իրավունքը նա թողնում էր մեռածի որդուն (տե՛ս Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Е., 1971, с. 465): Նախարարական տների ավագ և կրտսեր ճյուղերի իշխանության ժառանգականության մասին տե՛ս Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Երկեր, հ. Դ, Ե., 1981, էջ 223-231:*

[4] *Տե՛ս Հարությունյան Բ., Ավատատիրության ձևավորումը, «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), գիրք առաջին (IV դարի սկիզբ - IX դարի կես), (այսուհետև՝ «Հայոց պատմություն»), Ե., 2018, էջ 389: Անդրադառնալով Մանվելի գործունեությանը՝ Բ. Հարությունյանը նշում է, որ տանուտիրության յուրացումից հետո Մանվելն առանց թագավորի հրամանի հափշտակեց նաև սպարապետությունը (տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 149): Սակայն չենք կարող համաձայնել այդ պնդման հետ, քանի որ նախ սպարապետությունն արքունի գործակալություն էր և սպարապետի պաշտոնը շնորհվում էր թագավորի կողմից, ապա՝ Մանվելը սպարապետ է դարձել 377 թ. Կարինի ճակատամարտից հետո, երբ Վարազդատը գահընկեց արվեց և հեռացավ Հայաստանից, իսկ սպարապետ Բատ Սահառունին սպանվեց:*

[5] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 106:*

[6] *Տե՛ս Марцеллин, XXXI, 7, 1-2:*

[7] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 366:*

պետին դավադրաբար սպանելու և Արշակունի չլինելու մեջ ու պահանջում է հեռանալ Հայաստանից:[1] Մանվելի խոսքերից զայրացած Վարազդատը պատասխանում է սպառնալիքներով և նույնպես առաջարկում է. «Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զքեզ. երթ գնա յերկիրն Ճենաց անց կեաց, և անդէն թագաւորեսջիր յերկրին քում: Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ»[2]: Ինչպես վերը նշել ենք, Մանվել Մամիկոնյանին Հայաստան էին ուղղարկել հատուկ առաջադրանքով՝ հեռացնել կայսեր դրածոյին և Մուշեղի համար վրեժխնդիր լինելը միայն պատրվակ էր: Եթե նույնիսկ չլիներ Մուշեղի սպանությունը, այլ առիթ կգտնվեր Վարազդատի հեռացնելու և երկրում պարսիկների հովանավորությամբ իշխանություն հաստատելու համար[3]: Ասվածի վկայությունն է մարզպան Սուրենի և պարսկական զորաբանակի Հայաստան գալը, ինչին կանարդառնանք ստորև: Թագավորի և Մամիկոնյան իշխանի միջև սկսված սպառնալիքով լի նամակագրությունը վերաճում է զինված հակամարտության և Կարնո դաշտի 377 թ. ճակատամարտում թագավորական բանակը պարտություն է կրում: Գերի ընկած սպարապետ Բատ Սահառունին, որը Մուշեղի սպանության գլխավոր կազմակերպիչն էր, մահապատժի ենթարկվեց, իսկ Վարազդատին ապստամբները «հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց. չոգաւ գնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ և եկեաց, և անդէն մեռաւ»[4]:

ՄԱՆՎԵԼԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ. ՆՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՂՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՐՍԻՑ ԾՐԱԳԻՐԸ

Կատարելով իր առաքելության առաջին մասը, այն էր՝ հեռացնել Հայոց թագավորին, Մանվել Մամիկոնյանը փաստացի դարձավ ոչ միայն սպարապետ, այլև ամբողջ Մեծ Հայքի թագավորության առաջնորդը: Պարսից արքունիքի և Մամիկոնյան սպարապետի ծրագրի երկրորդ մասն այն էր, որ երկիրը խաղաղացնելուց հետո պարսից հովանավորությամբ նա թագավորեր Արշակունի արքայազունների փոխարեն: Քանի որ թե՛ Սուրենի բանակի ժամանումը, թե՛ Շապուհի կողմից Մանվելին արքայական պատմուճան և այլ նվերներ ուղարկելը ըստ Փավստոս Բուզանդի՝ «զթագաւորական պատմուճանն, սամոյր մ՝ և զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ, ու ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարաւանդ հանգոյց.և լանջաց պատիւ՝ ապիզակ ուղղարկելով»[5], վկայում են, որ պարսից արքան Մանվելին ճանաչում էր ոչ միայն Մեծ Հայքի կառավարիչ, այլև Հայոց արքա: Իսկ Մամիկոնյան սպարապետն իր վերջնական նպատակին հասնելու համար սկզբնական շրջանում դեռևս պետք է պահպաներ Զարմանդուխտ թագուհուն և նրա երկու որդիներին, քանի որ նրանց անունից էր կառավարում երկիրը, ու դեռևս պարզ չէր կայսրության վերաբերմունքն իր կատարած պետական հեղաշրջման նկատմամբ, որի արդյունքում գահից զրկվեց օրինական թագավորը և արքայազունները: Վերջինները պատվավոր պատանդության մեջ էին գտնվում և Մանվելին անհրաժեշտ էին՝ սեփական քայլերն ապագայում իրավական առումով արդարացնելու համար: Իսկ հետագայում, երբ կկարգավորվեր հարաբերությունները նաև Կ.Պոլսի արքունիքի հետ, Արշակունի արքայազուններն ավելորդ կլինեին Մամիկոնյան սպարապետի ճանապարհին: Սակայն դեպքերը դասավորվեցին այլ ուղղությամբ և նա չկարողացավ իրագործել իր ծրագրի երկրորդ մասը: Հիմնականում արևմտյան կողմնորոշում ունեցող Մամիկոնյաններից Մանվելը, վախենալով այն բանից, որ վեստգոթերի դեմ պայքարով զբաղված Բյուզանդիան վաղ թե ուշ անդրադառնալու էր Հայաստանի խնդիրներին և Վարազդատին հեռացնելու համար պատասխանատու էր համարելու իրեն, փորձեց երկիրը հանձնել պարսից թագավորի խնամակալությանը: Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, «Բայց յորժամ տեսանէր Մանուէլն զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւրին Յունաց, ածեալ զմտաւ իւրով՝ թէ արժան է նմա գէթ զմի ոք թիկունս առնել նմա,

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում, էջ 366, 368:*

[3] *Քննելով վերը նշված դեպքերը՝ նմանատիպ եզրահանգման է եկել Լեոն, նշելով, որ Շապուհը հանձնարարել էր Մանվելին հեռացնել կայսեր կողմից նշանակված Վարազդատին (տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 491):*

[4] *Փավստոս Բուզանդ, էջ 372: Մովսես Խորենացին, ընդհանրապես չհիշատակելով Մանվել Մամիկոնյանին, նշում է, որ Վարազդատը հարուցել էր կայսեր կայրությունը և այդ պատճառով էլ գահընկեց արվեց ու աքսորվեց Թուղիս կղզին (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 308-309):*

[5] *Փավստոս Բուզանդ, էջ 374:*

ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցալ թիկունս առնել զարքայն Յունաց»[1]: Լեոն նշում է, որ այս քայլով Մանվելը շտապում էր վերականգնել Արշակունիների թագավորությունը պարսիկների հովանավորությամբ[2]: Սակայն չենք կարող համաձայնվել նշանավոր հայագետի հետ, քանի որ Մանվելի գործունեության արդյունքում ոչ թե վերականգնվում, այլ դեպի կործանում էր գնում Արշակունիների թագավորությունը: Քանի որ օրինական թագավորի հեռացումը և ժամանակավորապես մանկահասակ արքայազունների անունից երկրի կառավարումը թագավորության վերականգնում չէր: Պատանդի կարգավիճակում հայտնված թագավորական ընտանիքի անունից պատվիրակություն է մեկնում Շապուհ Բ-ի մոտ. «զնա պաշտիցեն, և նմա միամտութեամբ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց»[3]: Սա ոչ այլ ինչ էր, քան ամբողջ Մեծ Հայքի կամավոր ենթարկում Պարսկաստանին, ինչը պետք էր հետագայում Մանվել Մամիկոնյանի՝ պարսից գերակայությամբ թագավորելու գինն արժենար: Իր գործելաոճով Մանվելը նման էր Մերուժան Արծրունուն: Եթե վերջինս իր նպատակին հասնելու համար դիմում էր բացահայտ քայլերի, ապա Մամիկոնյան իշխանն անելանելի դրության մեջ հայտնված թագուհու և արքայազունների անունից, առանց որևէ արյուն թափելու, պետությունը հանձնում է պարսից արքայի խնամակալությանը՝ դրանով ապահովելով իր և ժառանգների ապագան: Շապուհ Բ-ն, որ նախորդ մի քանի տասնամյակների ընթացքում հազարավոր զոհերի գնով փորձել էր իրեն ենթարկել Մեծ Հայքը, բայց հիմնականում ձեռնունայն մնացել, «մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնոսա, և մեծապէս մեծարանօք պատուեաց զնոսա»[4]: Կամովին իր հովանավորության տակ անցած Մեծ Հայքը կառավարելու համար Շապուհ Բ-ն Հայաստան է ուղղարկում «զՍուրէն պարսիկ մի ճոխ ի նախարարացն իւրոց. և ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Հայոց ի թիկունս օգնականութեան զօրավարին Մանուէլի, և պահել ի թշնամեաց զտիկինն զՁարմանդուխտ»[5]: Պատմիչը, փորձելով արդարացնել իր հերոսի վարմունքը, Սուրենի գալը ներկայացնում է որպես երկրի պաշտպանությանը ուղված միջոցառում: Սակայն թագուհուն պաշտպանելու կարիք չկար: Թեև Հայաստանը պառակտված էր ներքին խճդճություններից, սակայն հայոց արքունիքը բավարար թվով զորաբանակ ուներ իր ներքին հարցերը լուծելու համար, իսկ Սուրենի բանակը պետք է պաշտպաներ Մանվելի հետագա ձեռնարկումները, ինչի արդյունքում վերջնականապես Մեծ Հայքը կենթարկվեր Պարսկաստանին: Սուրենն իր հետ ոչ միայն թագեր էր բերում արքայազուններին, այլև ինչպես վերը նշել ենք, թագավորական պատմուճարան Մանվել Մամիկոնյանն՝ կամենալով հագուրդ տալ նրա իշխանատենչությանը[6]: Պարսից արքան Մամիկոնյան սպարապետին արքայական նշաններ ուղղարկելով հավասարեցնում էր նրան Արշակունիներին՝ հետագայում ավելի դյուրին դարձնելով արքայատոհմի փոփոխությունը: Սուրենի և պարսից հեծելազորի գալուստը Մեծ Հայք ուրախությամբ արձանագրող պատմիչը նշում է. «Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ, և հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. և կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընձայս և պատարագս: Սոյնպէս և մարզպանին Սուրենայ հասս և կօշիկս և զպիտոյս զռոճկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն»[7]: Լեոն, որ քննության է ենթարկում նշված ժամանակահատվածը, նշում է, որ Սուրենը Հայաստանում մնաց որպես փոխարքա, որի նկատմամբ հայոց արքունիքը պիտի ստորադրյալի դիրք ունենար[8]՝ հնազանդվելով նրա հրամաններին, հարկ վճարելով, ինչպես նաև հոգալով նրա և պարսից գնդի ծախսերը[9], ինչը

[1] Նույն տեղում, էջ 372:
[2] Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 492:
[3] Փավստոս Բուզանդ, էջ 372:
[4] Նույն տեղում, էջ 274:
[5] Նույն տեղում:
[6] Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորությունը IV դ. վերջին և V դ. առաջին եռամսյակին, «Հայոց պատմություն», էջ 151:
[7] Փավստոս Բուզանդ, էջ 374:
[8] Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 492:
[9] Տե՛ս Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Ե., 1977, էջ 116:

298 թ. Մծբինի պայմանագրից ի վեր, բացառիկ երևույթ էր հայ-պարսկական հարաբերություններում: Առանց որևէ անհրաժեշտության Հայաստանը դարձնելով Պարսկաստանի հարկատու երկիր[1]՝ Մամիկոնյան իշխանը պետք է սպասեր իր ծառայություններին համարժեք գնահատմանը պարսից արքայի կողմից: Սակայն վերջինս, որ կարողացել էր ջանք չգործադրելով Մեծ Հայքը դարձնել իրեն կախյալ երկիր, կարճ ժամանակ անց արդեն Մանվելի կարիքը չպետք է զգար: Շապուհ Բ-ն, առավելապես գործելով իր պետության շահին համապատասխան, Հայաստանում պարսից զորաբանակի հաստատվելուց հետո փորձեց մեջտեղից վերացնել Մամիկոնյան իշխանին, սակայն հաջողության չհասավ, քանի որ վերջինս արդեն տեղեկացված էր պարսիկների գործունեության վերաբերյալ և «յանկարծօրէն յեղակարծումն զօրավարն Հայոց Մանուէլ հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրենայ, և զտասն հազարսն զպարսիկսն միանգամայն կոտորէր»[2]: Ապա պատմիչը հաղորդում է, որ Մանվելը ևս երեք անգամ հաղթանակ է տանում պարսկական բանակների նկատմամբ, սակայն ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Մանանդյանը, «Փավստոսի Պատմության վիպական-ստեղծագործական այս հատվածները չեն ստուգվում հունա-հռոմեական աղբյուրների վկայություններով և ունեն հեքիաթային բնույթ»[3]: Կարծում ենք, որ չորս ճակատամարտի փոխարեն եղել է մեկ ճակատամարտ Զարեհավանի ավերակների մոտ՝ Բագրևանդ գավառում[4], որտեղ մարզպան Սուրենի բանակը գլխովին ջախջախվել է: Տեսնելով, որ պարսիկները չարդարացրեցին իր հույսերը և ինքն այլևս չի կարող հենվել նրանց վրա, Մանվել Մամիկոնյանին իրադարձությունների ընթացքը բերում է նախարարների հռոմեասեր խմբի կողմը[5], և պարսից կողմնորոշման ջատագովից, նա վերածվում է Հայաստանում հռոմեական քաղաքականության եռանդուն իրագործողի: Տարածաշրջանային բարդ իրավիճակում, փոխելով իր քաղաքական կողմնորոշումը, որում վճռորոշ նշանակություն ունեցան ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական հանգամանքները, Մամիկոնյան սպարապետն արդեն չէր կարող հավակնել հայոց գահին՝ պարսից գերակայությամբ և, հռոմեական դիրքորոշում որդեգրելով, բավարարվեց խնամակալի դերով, իսկ գահը պետք է զբաղեցներ Արշակունի մանկահասակ արքայազուններից որևէ մեկը: 379-380 թթ. միջակայքում գահ է բարձրանում Արշակ Գ-ն, գահակից ունենալով եղբորը՝ Վաղարշակին: Շարունակելով փաստացի կառավարել Մեծ Հայքը՝ Մանվելն իր ազդեցությունն ավելի ամրապնդելու համար դստերը կնության է տալիս Արշակ Գ-ին[6]: Ըստ Փավստոս Բուզանդի՝ նրա խնամակալությունը տևել է յոթ տարի՝ «մինչև ի բաժանումն երկրին Հայոց և ի քակտումն թագաւորութեանն»[7], այսինքն մինչև Մեծ Հայքի թագավորության բաժանման նախօրյակը 385 թ.[8]: Իսկ Արշակ Գ-ն Մանվել Մամիկոնյանի մահից հետո մինչև երկրի բաժանումը դեռևս կառավարում էր Մեծ Հայքը[9]:

Մամիկոնյան սպարապետը մահից առաջ ավագ որդուն՝ Արտաշիրին, հանձնեց «զտէրութիւն իւր և զսպարապետութիւն զօրավարութեանն իւրոց»[10]: Ապա պատմիչը նշում է, որ նա «գրեաց հրովարտակ առ թագաւորն Յունաց, և նմա յանձն արար զաշխարհս Հայոց և զԱրշակ

---

[1] *Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 237:*

[2] *Փավստոս Բուզանդ, էջ 376:*

[3] *Մանանդյան Հ., նշվ. աշխ., հ. Բ., էջ 238:*

[4] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 382:*

[5] *Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 109:*

[6] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 399: Ըստ Պատմահոր՝ Արշակ Գ-ն ամուսնացել էր Բաբիկ Սյունու դստեր հետ (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 309): Ն. Ադոնցը հակված է հավատալու Փավստոս Բուզանդի հաղորդմանը՝ նշելով. «Պատմահայրը ստրկել է Մանուել Մամիկոնյանին և այդ փոքր պատվից և Արշակին կնության է տալիս Սյունյաց իշխան Բաբիկի դուստրը» (տե՛ս Ադոնց Ն., Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հովհաննիսյանը, Էջմիածին, 2005, էջ 19):*

[7] *Փավստոս Բուզանդ, էջ 380:*

[8] *Մանվել Մամիկոնյանը մահացել է 385 թ. (տե՛ս Գիւտերբոգ Կ., Հռովմէական Հայաստան եւ Հռովմէական սատրապութիւնները Դ-Զ դարերուն, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մկրտիչ Վ. Նորշուան, Վիեննա, 1914, էջ 22), իսկ Հայաստանում նրա խնամակալությունը տևել է 378-385 թթ.:*

[9] *Տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Ե., 1982, էջ 18:*

[10] *Փավստոս Բուզանդ, էջ 390: Լեոն նշում է, որ Արշակ Գ-ի և Արտաշիրի անկարողությունը կանխատեսելու հետևանք էր, որ Մանվելը հայոց երկիրը կտակով հանձնեց հունաց կայսրին (տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 495):*

արքայ»[1]՝ հավանաբար փորձելով կայսրության օգնությամբ ապահովել իր փեսայի իշխանությունը: Սակայն, ինչպես հայտնի է, դեռևս Մանվելի կենդանության ժամանակ սկսված հռոմա-պարսկական բանակցություններն ավարտվեցին 387 թ. Հայաստանի առաջին բաժանումով: Արտաշիր Մամիկոնյանի գործունեության վերաբերյալ սկզբնաղբյուրներում այլևս տեղեկություններ չկան: Հավանաբար նա շատ կարճ ժամանակ էր զբաղեցրել սպարապետության պաշտոնը[2] և արդեն Արշակ Գ-ի ու Խոսրով Վերջինի 387-388 թթ. բախումների ժամանակ չի հիշատակվում: Ինչպես հայտնի է, Խոսրովի օրոք սպարապետն էր Սահակ Բագրատունին, իսկ Արշակ Գ-ն սպարապետ նշանակեց Դարա Սյունուն[3]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ Մանվել Մամիկոնյանը, Հայաստան գալուց հետո, կարճ ժամանակամիջոցում կարողացավ նախ հաստատվել որպես Մամիկոնյան տոհմի տանուտեր, ապա հեռացնելով թագավորին՝ դառնալ սպարապետ և ամբողջ Մեծ Հայքի կառավարիչ ու թագավորության խնամակալ՝ տնօրինելով ամբողջ երկրի ճակատագիր: Դրսևորելով դիվանագիտական բարձր հմտություններ՝ Մանվելը փորձեց պարսից հզոր արքայի օգնությամբ կյանքի կոչել սեփական ծրագրերը, սակայն երբ դա չստացվեց, նա արագորեն կողմնորոշվելով աշխարհաքաղաքական բարդ պայմաններում՝ որդեգրելով հռոմեական ավանդական կողմնորոշում և դառնալով կայսրության բարեկամը: Այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ Մամիկոնյան սպարապետի խիզախության և քաջության շնորհիվ մի քանի տարի երկիրը մեծավ մասամբ զերծ մնաց արտաքին վտանգներից: Սակայն նրա մահից կարճ ժամանակ հետո՝ 387 թ., Մեծ Հայքը բաժանվելու էր Հռոմի և Պարսկաստանի միջև և նախ Հայաստանի արևմտյան, ապա մի քանի տասնամյակ անց՝ արևելյան մասում վերացվելու էր Արշակունիների թագավորությունը, իսկ հայ ժողովուրդն այլևս չէր կարողանալու վերականգնել Մեծ Հայքի թագավորությունն իր ամբողջական ընդգրկումով:

Аргишти Варданян, МАНВЕЛ МАМИКОНЯН — РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ. Чтобы углубить внутриполитический кризис в Царстве Великой Армении после убийства Спарапета Мушега Мамиконяна в 376 году, персидский царь послал Манвела Мамиконяна, сына Арташеса, в Армению в качестве противовеса царю Великой Армении Вараздату, который пользовался поддержкой римского императора. Манвелу удалось вскоре не только победить царя и заставить его покинуть страну, но и стать регентом и правителем царства Великой Армении. После этих событий в Армению прибыла персидская армия, что могло означать принятие персидского владычества. Однако узнав через некоторое время, что персы намереваются убрать его, Манвел немедленно напал на персов, разбил их армию и, будучи блестящим политиком, перешел на сторону Рима. Следует отметить, что благодаря дипломатическому мастерству и храбрости Манвела Армении удалось на протяжении нескольких лет избежать внешних опасностей. Но после его смерти (385 г.), уже в 387 г., страна была разделена между двумя державами, после чего Царство Аршакидов постепенно упразднилось.

***Ключевые слова**: Мамиконяны, Манвел, царь Вараздат, Царство Аршакидов, Мовсес Хоренаци, Павстос Бузанд, Шапух II, персы, битва.*

Argishti Vardanyan, MANVEL MAMIKONYAN — REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA. In 376, after the assassination of Sparapet Mushegh Mamikonian, in order to deepen the internal political crisis in the Kingdom of Greater Armenia, the Persian king sent Manvel Mamikonian, son of Artashes, to Armenia as a counterweight to the king

---

[1] *Փավստոս Բուզանդ, էջ 390:*

[2] *Ս. Երեմյանը կարծում է, որ Արտաշիրը սպարապետությունը վարել է 384-385 թթ. (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 109)՝ հավանաբար Մանվելի խնամակալության հաշվելով յոթ տարի՝ 377-384թ.:*

[3] *Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 314:*

of greater Armenia Varazdat, who had the support of the Roman Emperor. Manvel quickly managed not only to defeat the king and force him to leave the country, but also to become Regent and ruler of the Kingdom of great Armenia. After these events, the Persian army arrived in Armenia, which could mean the acceptance of Persian rule. However, after some time, when he learned that the Persians intended to remove him, Manvel immediately attacked the Persians, defeated their army, and, being a brilliant politician, went over to the side of Rome. It should be noted that thanks to Manvel's diplomatic skill and bravery, Armenia managed to avoid external dangers for several years. But after his death (385), already in 387, the country was divided between the two powers, after which the Arshakid Kingdom was gradually abolished.

Key words: *the Mamikonyans, Manvel, king Varazdat, Kingdom of Arshakids, Movses Khorenatsi, Pavstos Buzand, Shapur B, Persians, battle.*